

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ 33 ԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ԶԿՅ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՈՒՄ
ՕՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՏԵՂՎԱԾ ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԵՎ ՕՐՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 33 ԱՆ ԶԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1**

ք. Երևան

«08» «12» 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անուկից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գևորգ Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ ԱՆ «Արմավիր» ԶԿՅ մասնաշենքերում օդափոխության, համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 330 օրացույցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացույցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (Էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 978.000.000 (ինը հարյուր յոթանասուներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 163.000.000 (հարյուր վաթսուներեք միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ը՝ 244.500.000 (երկու հարյուր քառասունչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:³⁰

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

³⁰Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրամի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Զրեակատարողական ծառայություն
Ը. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 02204739

ԶԿ ծառայություն
Ա. Ղազարյան



/տնօրագրություն/Վ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Էրեբունի
Սուշևյան 8փ., տ.92
«Հայթիզնեսքանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595
Տնօրեն՝ Գ.Գրիգորյան

[Handwritten signature]



/տնօրագրություն/Վ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱՇԻՎ*

**ՀՀ ԱՆ «ԱՐՄԱԿԻՐ» ԲԿՅ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՈՒՄ ՕՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՏԵՂՎԱԾ
ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԵՎ ՕՂՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	միավորի արժեքը	ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	1-6 ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՕՂԻ ՆԵՐԱՃՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ				
1	Ներածման-արտածման սարք VTS L=12500մ3/ժ H=600պա, ռեկուպերատոր թերթավոր, L=12500մ3/ժ H=550պա, ֆիլտր, Էլ. շարժաբեռումով փական, հակասառնեցման համակարգ, ավտոմատիկա (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հմլ	6	12 120 000	72 720 000
2	Ուղղանկյուն օդատար 150x150մմ, ճ=0.5մմ	մ ²	6	5 000	30 000
3	Ուղղանկյուն օդատար 200x100մմ, ճ=0.5մմ	մ ²	24	5 000	120 000
4	Ուղղանկյուն օդատար 200x150մմ, ճ=0.5մմ	մ ²	12	5 000	60 000
5	Ուղղանկյուն օդատար 200x200մմ, ճ=0.5մմ	մ ²	120	5 000	600 000
6	Ուղղանկյուն օդատար 250x200մմ, ճ=0.5մմ	մ ²	12	5 000	60 000
7	Ուղղանկյուն օդատար 300x150մմ, ճ=0.5մմ	մ ²	1770	5 000	8 850 000
8	Կլոր օդատար d125մմ, ճ=0.5մմ	մ ²	18	5 000	90 000
9	Կլոր օդատար d150մմ, ճ=0.5մմ	մ ²	1434	5 000	7 170 000
10	Ուղղանկյուն օդատար 300x200մմ, ճ=0.7մմ	մ ²	78	6 000	468 000
11	Ուղղանկյուն օդատար 400x200մմ, ճ=0.7մմ	մ ²	152	6 000	912 000
12	Ուղղանկյուն օդատար 400x250մմ, ճ=0.7մմ	մ ²	284	6 000	1 704 000
13	Ուղղանկյուն օդատար 400x350մմ, ճ=0.7մմ	մ ²	166	6 000	996 000
14	Ուղղանկյուն օդատար 400x400մմ, ճ=0.7մմ	մ ²	26	6 000	156 000
15	Ուղղանկյուն օդատար 450x400մմ, ճ=0.7մմ	մ ²	136	6 000	816 000
16	Ուղղանկյուն օդատար 500x4300մմ, ճ=0.7մմ	մ ²	128	6 000	768 000
17	Ուղղանկյուն օդատար 550x400մմ, ճ=0.7մմ	մ ²	194	6 000	1 164 000
18	Ուղղանկյուն օդատար 600x300մմ, ճ=0.7մմ	մ ²	72	6 000	432 000
19	Ուղղանկյուն օդատար 600x400մմ, ճ=0.7մմ	մ ²	64	6 000	384 000
20	Ուղղանկյուն օդատար 750x400մմ, ճ=0.7մմ	մ ²	30	6 000	180 000
21	Ուղղանկյուն օդատար 800x400մմ, ճ=0.7մմ	մ ²	112	6 000	672 000
22	Ուղղանկյուն օդատար 800x500մմ, ճ=0.7մմ	մ ²	76	6 000	456 000

23	Ուղղանկյուն օդատար 900x700մմ, δ=0.7մմ	յ ²	40	6 000	240 000
24	Ուղղանկյուն օդատար 950x600մմ, δ=0.7մմ	յ ²	16	6 000	96 000
25	Ուղղանկյուն օդատար 1400x600մմ, δ=0.7մմ	յ ²	60	6 000	360 000
26	Ուղղանկյուն օդատար 1400x800մմ, δ=0.7մմ	յ ²	162	6 000	972 000
27	Կրակն արգելող փական Φ150մմ	հատ	278	92 000	25 576 000
28	Ջետադարձ փական Φ150մմ	հատ	278	6 000	1 668 000
29	Օդի կարգավորիչ փական d150մմ	հատ	338	10 000	3 380 000
30	Ճաղաշարի տեղադրում 1050x150մմ	հատ	278	21 000	5 838 000
31	Ճաղաշարի տեղադրում 600x200մմ	հատ	51	17 000	867 000
32	Ճաղաշարի տեղադրում 500x150մմ	հատ	278	14 000	3 892 000
33	Ճաղաշարի տեղադրում d150մմ	հատ	72	6 000	432 000
34	Օդատարների ջերմամեկուսացում ինքնակաշնու մեկուսիչով, δ=10մմ	յ ²	5194	3 709	19 264 627
35	Կոնստրուկցիաներ օդատարների և սարքավորումների մոնտ. Համար	կգ	4200	3 000	12 600 000
36	Կոնստրուկցիաների ներկում հակակորոզիոն ներկով	յ ²	211	9 000	1 899 000
37	Արտաքին օդատարների մեկուսացում 0,4 մմ հաստության ցինկ. թիթեղով	յ ²	1290	5 000	6 450 000
38	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	տեղ	12	15 000	180 000
39	Անցքերի բացում հիմնական պատերում	տեղ	228	20 000	4 560 000
40	Անցքերի բացում միջնապատերում	հատ	420	3 000	1 260 000
41	Անցքերի վերականգնում	հատ	660	2 000	1 320 000
	ԸՆդամենը տվյալ բաժնով				189 662 627
	Կշիռ			23,27%	
	1-6 ՄԱՍՆԱՃԵՆՔԵՐԻ ՕՂԻ ԱՐՏԱԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ				
42	Ուղղանկյուն օդատար 150x150մմ, δ=0.5մմ	յ ²	6	6 000	36 000
43	Ուղղանկյուն օդատար 200x100մմ, δ=0.5մմ	յ ²	28	6 000	168 000
44	Ուղղանկյուն օդատար 200x150մմ, δ=0.5մմ	յ ²	1	6 000	6 000
45	Ուղղանկյուն օդատար 200x200մմ, δ=0.5մմ	յ ²	120	6 000	720 000
46	Ուղղանկյուն օդատար 250x200մմ, δ=0.5մմ	յ ²	72	6 000	432 000
47	Կլոր օդատար d125մմ, δ=0.5մմ	յ ²	22	5 000	110 000
48	Կլոր օդատար d150մմ, δ=0.5մմ	յ ²	654	5 000	3 270 000
49	Ուղղանկյուն օդատար 300x200մմ, δ=0.7մմ	յ ²	85	6 000	510 000
50	Ուղղանկյուն օդատար 400x200մմ, δ=0.7մմ	յ ²	162	6 000	972 000
51	Ուղղանկյուն օդատար 400x250մմ, δ=0.7մմ	յ ²	292	6 000	1 752 000
52	Ուղղանկյուն օդատար 400x350մմ, δ=0.7մմ	յ ²	126	6 000	756 000
53	Ուղղանկյուն օդատար 400x400մմ, δ=0.7մմ	յ ²	78	6 000	468 000
54	Ուղղանկյուն օդատար 450x400մմ, δ=0.7մմ	յ ²	132	6 000	792 000
55	Ուղղանկյուն օդատար 500x300մմ, δ=0.7մմ	յ ²	144	6 000	864 000
56	Ուղղանկյուն օդատար 550x400մմ, δ=0.7մմ	յ ²	162	6 000	972 000

57	Ուղղանկյուն օդատար 600x300մմ, δ=0.7մմ	մ ²	16	6 000	96 000
58	Ուղղանկյուն օդատար 600x400մմ, δ=0.7մմ	մ ²	178	6 000	1 068 000
59	Ուղղանկյուն օդատար 750x400մմ, δ=0.7մմ	մ ²	18	6 000	108 000
60	Ուղղանկյուն օդատար 800x400մմ, δ=0.7մմ	մ ²	176	6 000	1 056 000
61	Ուղղանկյուն օդատար 800x500մմ, δ=0.7մմ	մ ²	76	6 000	456 000
62	Ուղղանկյուն օդատար 900x700մմ, δ=0.7մմ	մ ²	40	6 000	240 000
63	Ուղղանկյուն օդատար 950x600մմ, δ=0.7մմ	մ ²	16	6 000	96 000
64	Ուղղանկյուն օդատար 140x600մմ, δ=0.7մմ	մ ²	74	6 000	444 000
65	Կրակն արգելող փական Φ150մմ	հատ	288	120 000	34 560 000
66	Հետադարձ փական Φ150մմ	հատ	288	7 000	2 016 000
67	Օդի կարգավորիչ փական d150մմ	հատ	300	12 000	3 600 000
68	Ճաղաչարի տեղադրում 600x200մմ	հատ	48	22 000	1 056 000
69	Ճաղաչարի տեղադրում d150մմ	հատ	360	6 500	2 340 000
70	Օդատարների ջերմամեկուսացում ինքնակաշուն մեկուսիչով, δ=10մմ	մ ²	4500	4 000	18 000 000
71	Կոնստրուկցիաներ օդատարների և սարքավորումների մոնտ. Համար	կգ	700	4 000	2 800 000
72	Կոնստրուկցիաների ներկում հակակորոզին ներկով	մ ²	35	10 000	350 000
73	Վրտաքին օդատարների մեկուսացում 0,4 մմ հաստությամբ ցինկ. թիթեղով	մ ²	1290	5 000	6 450 000
74	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	տեղ	144	15 000	2 160 000
75	Անցքերի բացում հիմնական պատերում	տեղ	48	20 000	960 000
76	Անցքերի բացում միջնապատերում	հատ	300	3 000	900 000
77	Անցքերի վերականգնում	հատ	492	2 000	984 000
Ընդամենը տվյալ բաժնով					91 568 000
Կշիռ					11,24%
ԱՐՏԱԾՄԱՆ-ՆԵՐԱԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՐՄԱՍՏՈՂԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ					
78	Պողպատե խողովակաչարի տեղադրում Φ76x3մմ պատերի վրա,վկացումով, քլորացումով	զմ	204	4 000	816 000
79	Պողպատե խողովակաչարի տեղադրում Φ89x3.5մմ պատերի վրա,վկացումով, քլորացումով	զմ	90	5 000	450 000
80	Պողպատե խողովակաչարի տեղադրում Φ133x4մմ պատերի վրա,վկացումով, քլորացումով	զմ	90	8 000	720 000
81	Պողպատե խողովակաչարի տեղադրում Φ159x4.5մմ պատերի վրա,վկացումով, քլորացումով	զմ	232	13 000	3 016 000
82	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,78	800 000	624 000
83	Կոնդենսատորի դատարկման փականների տեղադրում Φ32մմ	հատ	18	4 000	72 000
84	Կոնդենսատորի դատարկման փականների տեղադրում Φ40մմ	հատ	18	6 000	108 000
85	Անցումային փականների տեղադրում Φ80մմ	հատ	12	50 000	600 000
86	Փականների տեղադրում Φ150մմ	հատ	2	112 000	224 000
87	Ձեռքի կարգավորման փականների տեղադրում Φ80մմ	հատ	6	150 000	900 000

88	խողովակների ջերմամեկուսացում ինքնակաշուն մեկուսիչով	մ ²	227,25	3 500	795 375
89	Մետաղական կոնստրուկցիաներ խողովակների ամրացման համար	կգ	840	1 200	1 008 000
90	խողովակների հակակոռոզիոն լաքապատում	մ ²	280	500	140 000
91	Պատյան $\varnothing 108 \times 4$ պողպատյա խողովակից L=350մմ 24հատ	գմ	8	5 500	46 200
92	Սիֆոնային առանցքային կոմպենսատոր $\varnothing 80$, L=300մմ	հատ	2	35 000	70 000
93	Սիֆոնային առանցքային կոմպենսատոր $\varnothing 125$, L=400մմ	հատ	2	40 000	80 000
94	Սիֆոնային առանցքային կոմպենսատոր $\varnothing 150$, L=400մմ	հատ	4	55 000	220 000
95	Արտաքին օդատարների մեկուսացում 0,4 մմ հաստության ցինկ. թիթեղով	մ ²	280	5 000	1 400 000
96	Անցումային փականների տեղադրում $\varnothing 80$ մմ	հատ	12	50 000	600 000
97	Չտիչ d80մմ	հատ	6	40 000	240 000
98	Ճկուն միացում d80մմ	հատ	12	25 000	300 000
99	Դատարկման փականների տեղադրում $\varnothing 32$ մմ	հատ	12	5 000	60 000
100	Ավտոմատ օդահեռացուցիչ dy 15	հատ	12	2 000	24 000
101	Ճնշաչափ P=0-16 մթն. եռաբաշխիչ փականով dy15	հատ	12	35 000	420 000
102	Ջերմաչափ t=0-100 °C պատյանով	հատ	12	2 500	30 000
Ընդամենը տվյալ բաժնով					12 963 575
Կշիռ					1,59%
Հակահրդեհային պաշտպանության միջոցառումներ					
103	Օդամղիչ սարք OCA 501 -063H-00750/2- Y2, L = 7560 մա/ժ, H=400պա, N=1.2կվտ, n= 2820 պտ/1րոպ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	3	190 000	570 000
104	Օդամղիչ սարք OCA 501 -050H-00400/2- Y2, L = 1170 մա/ժ, H=700պա, N=4կվտ, n= 2850 պտ/1րոպ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	6	185 000	1 110 000
105	Օդամղիչ սարք L = 16500 մա/ժ, H=800պա, N=15կվտ, n= 730 պտ/1րոպ, ծխի ջերմ. մինչև 600°C (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	6	700 000	4 200 000
106	Օդատարներ սև մետաղից $\delta=1,5$ մմ 500x300մմ	մ ²	32	7 000	224 000
107	Օդատարներ սև մետաղից $\delta=1,5$ մմ 800x350մմ	մ ²	414	7 000	2 898 000
108	Օդատարներ սև մետաղից $\delta=1,5$ մմ 700x300մմ	մ ²	120	7 000	840 000
109	Ծխատարի և դիմհարի ներկում ջերմակայուն ներկով	մ ²	566	5 000	2 830 000
110	Ծխատարի և դիմհարի մեկուսացում $\delta=60$ մմ հաստությամբ ջերմակայուն մեկուսիչներով /ֆոլգայապատ հանքային բամբակ/	մ ²	566	2 000	1 132 000
111	Ծխահեռացման փական էլեկտրոմագնիսական 800x300մմ	հատ	15	80 000	1 200 000
112	Հակահրդեհային փական 500x300մմ	հատ	16	78 000	1 248 000
113	Կոնստրուկցիաներ օդատարների և սարքավորումների մոնտ. համար,	կգ	4 000	1 200	4 800 000
114	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	տեղ	20	15 000	300 000
115	Անցքերի բացում հիմնական պատերում	տեղ	14	20 000	280 000
116	Անցքերի բացում միջնապատերում	հատ	14	3 000	42 000

117	Անցքերի վերականգնում	հատ	48	2 000	96 000
	Ընդամենը տվյալ բաժնով				21 770 000
	Կշիռ			2,67%	
ԿԱԼԱՆԱԽՅԵՐԻ (1-6 ՄԱՍՆԱՇԵՆՔ) ՁԵՐՄԱՍՈՒՆԱՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ					
118	Ֆանկոյլ՝ սառնամատակարարման հզորությունը 2,5 կՎտ Ձերմատվության հզորությունը 5 կՎտ էլ. էն. ծախսը 40 Վտ, ջերմատարի ծախսը 435/ժ Օդի ռեցերկույացիոն հզորությունը 510-380 մա/ժ Չափերը՝ 750x540x212(+h) (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	209	220 000	45 980 000
119	Ֆանկոյլ՝ սառնամատակարարման հզորությունը 3.2 կՎտ Ձերմատվության հզորությունը 6.5 կՎտ էլ. էն. ծախսը 46 Վտ Օդի ռեցերկույացիոն հզորությունը 600-400 մա/ժ Ձերմատարը 530/ժ Չափերը՝ 750x540x212(+h) (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	144	250 000	36 000 000
120	Պոլիարոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ20մմ, փորձարկումով	զմ	1044	1 200	1 252 800
121	Պոլիարոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ25մմ, փորձարկումով	զմ	424	1 700	720 800
122	Պոլիարոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ32մմ, փորձարկումով	զմ	296	2 400	710 400
123	Պոլիարոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ40մմ, փորձարկումով	զմ	360	3 400	1 224 000
124	Պոլիարոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ50մմ, փորձարկումով	զմ	320	4 800	1 536 000
125	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ108x4մմ վրա,վճացումով, քլորացումով	զմ	30	6 000	180 000
126	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ133x4մմ պատերի վրա,վճացումով, քլորացումով	զմ	45	8 000	360 000
127	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ159x4.5մմ պատերի վրա,վճացումով, քլորացումով	զմ	50	13 000	650 000
128	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ219x6մմ պատերի վրա,վճացումով, քլորացումով	զմ	296	18 000	5 328 000
129	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	1,7	1 200 000	2 040 000
130	Փականների տեղադրում Φ20մմ	հատ	706	3	2 118
131	Փականների տեղադրում Φ25մմ	հատ	20	4 500	90 000
132	Փականների տեղադրում Φ32մմ	հատ	42	6 300	264 600
133	Փականների տեղադրում Φ40մմ	հատ	4	9 500	38 000
134	Փականների տեղադրում Φ50մմ	հատ	24	14 000	336 000
135	Դատարկման փականների տեղադրում Φ20մմ	հատ	353	3 000	1 059 000
136	Դատարկման փականների տեղադրում Φ25մմ	հատ	12	4 500	54 000
137	Դատարկման փականների տեղադրում Φ32մմ	հատ	20	6 300	126 000
138	Դատարկման փականների տեղադրում Φ40մմ	հատ	6	9 500	57 000
139	Ձեռքի կարգավորման փական Φ50մմ	հատ	24	80 000	1 920 000
140	Ձեռքի կարգավորման փական Φ40մմ	հատ	2	60 000	120 000
141	Ավտոմատ օդափռացուցիչ dy 15	հատ	706	4 000	2 824 000
142	Ֆիլտրերի տեղադրում D200մմ	հատ	2	300 000	600 000

143	խողովակների ջերմամեկուսացում ինքնակաշուն մեկունիչով	մ ²	481,52	3 500	1 685 320
144	Պոլիպրոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ 20մմ, փորձարկումով	գմ	532	1 200	638 400
145	Պոլիպրոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ 25մմ, փորձարկումով	գմ	294	1 700	499 800
146	Պոլիպրոպիլենային, խողովակաշարի տեղադրում Φ 32մմ, փորձարկումով	գմ	96	2 400	230 400
147	Անցքերի բացում բետոնյա պատերում	տեղ	24	25 000	600 000
148	Անցքերի բացում միջնապատերում	հատ	560	3 000	1 680 000
149	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	տեղ	24	15 000	360 000
150	Անցքերի վերականգնում	հատ	608	2 000	1 216 000
151	Մետաղական կոնստրուկցիաներ խողովակների և ֆանկոյլների ամրացման համար	կգ	1800	1 200	2 160 000
152	խողովակների հակակոռոզիոն լաքապատում	մ ²	458	500	229 000
ԸՆդամենը տվյալ բաժնով					112 771 638
Կշիռ					13,84%
ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ					
153	Ավտոմատացված ջրային կաթսա Buderus Q=1070 կՎտ (920.200կկալ/ժ) մաքսիմում ջերմարտադրողականությամբ /համարժեք (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	կոմպ	2	6 900 000	13 800 000
154	Ավտոմատացված ջրային կաթսա SuperRAC 810 Q=810կՎտ (696.600կկալ/ժ) մաքսիմում ջերմարտադրողականությամբ /համարժեք (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	կոմպ	2	6 600 000	13 200 000
155	Համակցված ավտոմատացված այրիչ գազի համար Q=1070կՎտ ջերմային հզորությամբ N 3.5 կՎտ (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	կոմպ	2	2 700 000	5 400 000
156	Համակցված ավտոմատացված այրիչ գազի համար Q=810կՎտ ջերմային հզորությամբ	կոմպ	2	2 700 000	5 400 000
157	Չիլլեր 505 կՎտ սառեցման հզորությամբ օդային հովացումով, սառեցնող նյութ ջուր, N=255 կՎտ /համարժեք (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	կոմպ	3	48 500 000	145 500 000
158	Ջրատաքացուցիչ թերթավոր Q=1551կՎտ 1763860կկալ/ժ) ջերմային հզորությամբ /համարժեք (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	կոմպ	2	2 700 000	5 400 000
159	Կաթսայի ջրի շրջանառու պոմպ G=85մ ³ /ժ, H=8մ, N=11 կՎտ (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	2	1 050 000	2 100 000
160	Չիլլերային համակարգի շրջանառու պոմպեր G=90մ ³ /ժ, H=24մ, N=11 կՎտ (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	4	18 000 000	72 000 000
161	Ջրի մազնիսական բևեռացուցիչ dy 32 (տեղադրման, տեղափոխման, պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	120 000	120 000

162	Ջիդրավիկ սլաք (D600մմ,H=2500) (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	370 000	370 000
163	Ընդարձակիչ անոթ թաղանթային V=1000լ, H=1000մմ	հատ	3	1 080 000	3 240 000
164	Սառնամատակարարման մատակարարող կոլեկտոր Φ 300, L-1.8 մ	հատ	1	175 000	175 000
165	Սառնամատակարարման հետադարձ կոլեկտոր Φ 300, L-1.8 մ	հատ	1	175 000	175 000
166	Մետաղական բաք 2մx1.5մx2մ(h) V-6Մ3	հատ	1	1 500 000	1 500 000
167	Կրկնակի շրջանառու պոմպ՝ կալանատեղերի ջեռուցման համար Qտ=559 կՎտ,G=29մա/ժ, dy100մմ H=22մ, N=7,5 կՎտ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	1 100 000	1 100 000
168	Կրկնակի շրջանառու պոմպ՝ 1-6 ներածման համակարգ Qտ=321 կՎտ,G=18մա/ժ, dy70մմ H=20մ, N=5 կՎտ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	900 000	900 000
169	Կրկնակի շրջանառու պոմպ վարչական, բժշկական և մյուս բաժինների ջեռուցման համար Qտ=256 կՎտ,G=15մա/ժ, dy70 H=22մ, N=5 կՎտ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	900 000	900 000
170	Կրկնակի շրջանառու պոմպ վարչական, բժշկական և մյուս բաժինների 7-29 ներածման համակարգերի համար Qտ=477կՎտ,G=25մա/ժ, dy80մմ H=22մ, N=7,5 կՎտ (տեղադրման, տեղափոխման , պահեստավորման և այլ նյութերի արժեքը)	հատ	1	1 050 000	1 050 000
171	Ջեռուցման մատակարարող կոլեկտոր Φ 250,L-2մ	հատ	1	170 000	170 000
172	Ջեռուցման հետադարձ կոլեկտոր Φ 250,L-2մ	հատ	1	170 000	170 000
Ընդամենը տվյալ բաժնով					272 670 000
Կշիռ					33,45%
ՋԵՐՄԱՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ					
173	Սողնակների տեղադրում Φ 250մմ	հատ	8	275 000	2 200 000
174	Սողնակների տեղադրում Φ 200մմ	հատ	4	180 000	720 000
175	Սողնակների տեղադրում Φ 150մմ	հատ	18	120 000	2 160 000
176	Սողնակների տեղադրում Φ 125մմ	հատ	14	90 000	1 260 000
177	Սողնակների տեղադրում Φ 100մմ	հատ	6	65 000	390 000
178	Սողնակների տեղադրում Φ 80մմ	հատ	12	50 000	600 000
179	Սողնակների տեղադրում Φ 50մմ	հատ	4	30 000	120 000
